Գավառ համայնքում մեղվաբուծությունը

զարգացնելու համայնքային սոցիալական ծրագիր

Մեղվաբուծության ընդհանուր նկայագիրը

Մեղվաբուծություն՝ մեղրատու մեղուների բուծումը, խնամքը, դրանց օգտագործումը գյուղատնտեսական էնտոմոֆիլ բույսերի փոշոտման, մեղվաբուծական մթերքների և հումքի ստացման համար.

Մեղվաբույծ՝ մեղվաբուծությամբ զբաղվող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

Մեղվաընտանիք՝ միևնույն մեղվափեթակում կամ փչակում (բնում) ապրող մեղրատու մեղուների ընտանիք, որը կազմված է աշխատավոր մեղուներից, բոռերից (արու մեղուներից) և մայր մեղվից.

Փեթակ՝ մարդու պատրաստած շինություն՝ մեղվաընտանիքի կենսագործունեության ապահովման համար

Մեղվանոցները տեղադրում են սահմանված կարգով հատկացված հողատարածքներում՝ պահպանելով համապատասխան անասնաբուժասանիտարական և մեղրատու մեղուներին պահելու կանոնները: Մեղվանոցները տեղադրվում են առողջապահական, կրթական, մշակութային և այլ հաստատություններից քաղաքացիների համար անվտանգ՝ առնվազն 0.5 կիլոմետր հեռավորության վրա: Մեղվանոցները տեղադրվում են աղբանոցներից, թափոնների մաքրման, հավաքման, վերամշակման և օգտագործման (օգտահանման) օբյեկտներից, աղտոտված ջրամբարներից և այդօրինակ այլ տարածքներից առնվազն 3 կիլոմետր հեռավորության վրա: Այդ պահանջը չի կիրառվում մեղուների ձմեռացման դեպքում:

Փեթակի գերջերմացման և օդի խոնավության կտրուկ բարձրացման հետևանքով մեղվաընտանիքների անկումը կանխելու նպատակով ճանապարհային ոստիկանությանը արգելվում է մեղվի փեթակներ տեղափոխող տրանսպորտային միջոցները 15 րոպեից ավել կանգնեցնել, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պայմանավորված է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տրանսպորտային միջոցը կանգնեցնելու կամ տրանսպորտային միջոցի երթևեկությունն արգելելու հիմքերով և կարգով:

4. Մեղվաբույծները պարտավոր են ապահովել՝

1) մեղրատու մեղուների օգտագործման և վերարտադրության անասնաբուծական սպասարկումը.

2) մեղրատու մեղուների կենսամիջավայրի պահպանությունը.

3) մեղրատու մեղուների խնամքի ու կերակրման անասնաբուժասանիտարական կանոնների պահպանումը.

4) «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների կատարումը:

5. Մեղվաբույծները պարտավոր են փեթակներն ու մոմաթերթի շրջանակները և մեղվաբուծական այլ միջոցները պատրաստել այնպես, որ բացառվեն մեղվաբուծական մթերքի որակի իջեցումը և շրջակա միջավայրի աղտոտումը:

Ծրագրի նպատակն է զարգացնել մեղվաբուծությունը Գավառ համայքում մեղվաբույծներին փեթակ պատրաստելու հումք տրամադրելու միջոցով:

Ծրագրի հիմնական նպատակը՝Տնտեսվարողի հետ պայմանագրի միջոցով սոցիալական աջակցություն՝ /փեթակ պատրաստելու հումք տրամադրել/ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին ինքնզբաղվածությունը ապահովելու նպատակով:

Ծրագրի շահառուներն ընտրված թվով 4 մեղվաբույծներ են, որոնք աջակցության կարիք ունեցող սոցիալապես անապահով ընտանիքներ են, որից երկուսը ունեն փեթակ պատրաստելու կարողություն:Նրանք կարիք ունեն թվով 40 փեթակի հումքի ձեռքբերման՝մեղվաընտանիքները շատացնելու նպատակով:

	Ծրագրի նպատակը	թվով 40 փեթակի հումքի ձեռքբերման՝մեղվաընտանիքները շատացնելու նպատակով:
	Ծրագրի բյուջեն	կազմում է 800 000 / ութ հարյուր հազար / ՀՀ դրամ
	Խնդիր՝ որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակչության սոցիալական պաշտպանություն
	Ծրագրի հիմնական նպատակը	Տնտեսվարողի հետ պայմանագրի միջոցով Գավառի համայնքապետարանի կողմից սոցիալական աջակցություն տրամադրել /փեթակ պատրաստելու հումքի տրամադրման միջոցով / կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին ինքնզբաղվածությունը ապահովելու նպատակով : Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ,8-րդ և 13-րդ ենթակետում ներկայացված իրավիճակների
	Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Կգնահատվեն ծրագիրն իրականացնելու ընթացքում
	Մեղվաբույծն իրականացնում է	Մեղուների խնամքը, պահվածքը և բուծումը, մեղվամթերքների՝ մեղրի, մեղվամոմի, ծաղկափոշու, ակնամոմի, մայրակաթի (աշխատավոր մեղուների կողմից արտադրված) ու մեղվի թույնի արտադրության և նախնական վերամշակման աշխատանքների կազմակերպում ու պլանավորում առանձին մեղվանոցներում և մեղվաբուծական տնտեսություններում՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից:
	Մեղուների խնամքի կազմակերպում	1) մեղվաընտանիքների արդյունավետ կենսագործունեության ապահովում, 2) ձմռանը մեղուների անվնաս պահպանում, 3) մասնակցություն հիվանդությունների կանխարգելման և բուժման միջոցառումների ծրագրերի մշակմանը:

	Մեղվամթերքների արտադրություն և նախնական վերամշակում	1. մեղվամթերքների արտադրություն, 2. մեղվամթերքների նախնական վերամշակում:
	Մեղուների բուծում և մայրաբուծություն	1. մեղուների բուծում, 2. մայրաբուծություն:
	Գյուղատնտեսական մշակաբույսերի խաչաձև փոշոտման կազմակերպում	1. տարբեր գյուղատնտեսական մշակաբույսերի խաչաձև փոշոտման համար պահանջվող մեղվաընտանիքների քանակի առկա քանակ , 2. տարբեր գյուղատնտեսական մշակաբույսերի խաչաձև փոշոտման համար մեղուների օգտագործում:
	Մեղվաբուծության բնագավառում մեղվամթերքների արտադրության և ծառայությունների մատուցման գործընթացների կառավարում	1. մեղվաբուծության բնագավառում մեղվամթերքների արտադրության և ծառայությունների մատուցման հիմնական ցուցանիշների պլանավորում, 2. կատարողների կողմից աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման կազմակերպում, 3. կատարողների կողմից աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման ընթացքի և արդյունքների հսկում ու գնահատում,
	Պատասխանատու է՝ կատարած աշխատանքի արդյունքի, իր և իր ենթակայությամբ աշխատողների աշխատանքային պարտականությունների պատշաճ իրականացման,	Իրեն վստահված արտադրական միջոցների պահպանման ու արդյունավետ շահագործման, արտադրական սանիտարիայի, անվտանգության տեխնիկայի կանոնների և հակահրդեհային անվտանգության կանոններից բխող պահանջների պահպանման ու ապահովման համար:
	Մասնագիտական գիտելիքներ և կարողություններ	1.ոլորտի զարգացման հեռանկարները և խնդիրները 2.մեղվաընտանիքի կենսաբանական հիմունքները, մեղուների հիմնական ցեղերը և տեսակները, անատոմիան ու ֆիզիոլոգիան, մոմ արտադրող գեղձերի աշխատանքը, խայթոցը և մեղվի թույնի ազդեցությունը մարդկանց ու կենդանիների վրա, 3.մեղվաընտանիքի կազմը, մեղվաընտանիքի առանձնյակների՝ մայր մեղվի, աշխատավոր մեղվի և բոռերի մորֆոլոգիական ու ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, նրանց գործառույթները,

		4.աշխատավոր մեղուների գործառույթների բաժանումը կախված նրանց տարիքից, 5.մեղվաընտանիքի կենսագործունեությունը տարվա ընթացքում և ըստ տարվա եղանակների, 6)մեղուների հաղորդակցման ազդանշանները, 7.մեղուների սնունդը, 8.մեղուների աճի, զարգացման և բազմացման առանձնահատկությունները բնական ու արհեստական եղանակներով, 9.պարսատվությունը, դրա պատճառները և կանխարգելումը, 10)փեթակների հիմնական տիպերը և կառուցվածքը, 11)փեթակների պատրաստման և ջերմամեկուսացման համար օգտագործվող նյութերը, 10.մեղվաընտանիքները զննելու և խնամելու համար մեղվաբուծական գույքն ու սարքավորումները, մեղվանոցային մեխանիզմները և կառույցները, 13)մեղվամթերքների արտադրության, նախնական վերամշակման և պահպանման տեխնոլոգիաները, 14)մեղվամթերքների հատկությունները և դրանց օգտագործումն ու կիրառումը, 15)մեղուների խնամքի և բուծման տեխնոլոգիաները, 16)անասնաբուժասանիտարական կանխարգելիչ կանոնները, 17)մեղվաբուծական գույքի և մեղվանոցային սարքավորումների ախտահանման կանոնները, 18)մեղուների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները, դրանց ախտորոշման մեթոդներն ու կանխարգելիչ միջոցառումները, 19)մեղուների վնասատուները և դրանց դեմ պայքարի միջոցները:
	Մասնագիտական կարողություններ	1)օգտագործել մեղվաբուծական գույքը և մեղվանոցային սարքավորումներն ըստ նշանակության, 2)իրականացնել մեղվաբուծական գույքի և մեղվանոցային սարքավորումների փոքրածավալ վերանորոգում, 3)ախտահանել մեղվաբուծական գույքը, մեղվանոցային սարքավորումները, շինությունը, փոխադրամիջոցները, 4)իրականացնել մեղվաբուծական տնտեսությունում առկա կրծողների

		ոչնչացման միջոցառումներ՝ անասնաբույժի կամ սանիտարահամաճարակային կենտրոնի մասնագետի ղեկավարությամբ, 5)ապահովել կենսանյութերի հետ աշխատանքի հականեխման պայմաններ, 6)պահպանել անձնական հիգիենայի և անասնաբուժասանիտարական կանոնները, կիրառել պաշտպանության անհրաժեշտ մեթոդներ ու միջոցներ, 7)պատրաստել ախտահանման և լվացման միջոցների լուծույթներ, 8)հայտնաբերել հիվանդ մեղուներին, 9)կատարել ոչ բարդ անասնաբուժական նշանակումները, 10)իրականացնել մեղվաընտանիքների խնամքի աշխատանքներ՝ տարվա եղանակին համապատասխան, 11)կազմակերպել նոր մեղվաընտանիքների բուծումը, մայր մեղուների և բոռերի աճեցումը, ապահովել դրանց անվնաս պահպանումը, 12)կիրառել մեղվաընտանիքների արագացված վերարտադրության միջոցառումներ, 13)ապահովել մեղուների բազմացման, կերակրման, խնամքի և մեղվաբուծության արտադրանքի ստացման մեթոդների կիրառումն՝ըստ գործող ստանդարտների, 14)կատարել նմուշառում մեղվանոցի և մեղվաբուծական տնտեսության անասնաբուժասանիտարական վիճակի վերաբերյալ, հարկ եղած դեպքում նմուշներ ուղարկել հետազոտության, 15)մեղվանոցում և մեղվաբուծական տնտեսությունում անասնաբույժի ղեկավարությամբ իրականացն բուժական-առողջարարական միջոցառումներ, 16)արտադրել մեղվաբուծության հիմնական և լրացուցիչ մթերքներ, գնահատել դրանց որակը, 17)վարել մեղվաընտանիքների տոհմային հաշվառում, 18)որոշել մեղվաընտանիքների բնութագրերը՝ արդյունավետությունը, ցրտադիմացկունությունը, հիվանդություններին դիմակայելու կարողությունը, 19) բուծել մայր մեղուներ՝ արհեստական եղանակով, 20)վերահսկել մայր մեղուների և բոռերի զուգավորումը

	Ընդհանուր ոչ մասնագիտական կարողություններ	Պետք է կարողանա. 1)մասնագիտական գործունեությունում օգտագործել շուկայի վերաբերյալ տեղեկատվությունը, 2)մասնագիտական խնդրիների լուծման ժամանակ օգտագործել կիրառական համակարգչային ծրագրեր, 3)մասնագիտական գործունեությունում իրականացնել վնասվածքավտանգ և վնասակար գործոնների վերլուծություն, 3)ապահովել մասնագիտական գործունեությունում աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի, հիգիենայի և հրդեհային պաշտպանության կանոններից ու նորմերից բխող պահանջները;